## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք, ՀՀ
Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 3 փող. 2, Հեռ. 077-70-84-06 ,
geghard.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 65
*22 հունիսի 2018թ.*

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Գեղարդ համայնքի ղեկավարի որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2018թվականի N 12-Ա

## ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիր իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գեղարդ համայնքի ղեկավարի 2013թվականի սեպտեմբերի 25-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 31-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

2018թ.
գ.Գեղարդ

Հավելված 1
Գեղարդ համայնքի ղեկավարի
2018թվականի հունիսի 6-ի N 12-Ա որոշման

# ԿԱԶՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Սասուն Տեր-Ղազարյան — հանձնաժողովի նախագահ,առաջատար մասնագետ, ծածկագիր (3.1-1)

2.Գագիկ Արզումանյան — հանձնաժողովի նախագահի տեղակալ համայնքի բնակիչ

3. Ալիկ Կարապետյան — հանձնաժողովի քարտուղար համայնքի ղեկավարի տեղակալ

4.Արման Սարգսյան — հանձնաժողովի անդամ համայնքի բնակիչ

5.Ժիրայր Թառոյան — հանձնաժողովի անդամ համայնքի բնակիչ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

07 հունիսի 2018 թվականի N 13-Ա

### ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գեղարդ համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 10-ի <<ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման հավելվածում կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

## ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.Գեղարդ համայնքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում, տարածքը կազմում է 55 կմ/2: Համայնքի տարածքում բնակելի տների քանակը կազմում է 151 իսկ բազմաբնակարան շենքերի քանակը 0 միավոր: Համայնքի բնակչությունը կազմում է 397 մարդ, որից 198 կին և 199 տղամարդ: Բնակչության թվաքանակը ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան 4 մարդ, 1-ից 9 տարեկան՝ 41 մարդ, 9-ից 17 տարեկան՝ 39 մարդ, 17-ից բարձր՝ 287 մարդ:

Համայնքը սահմանակից է Գողթ համայնքին (սահմանի երկ. 5 կմ) և Գառնի համայնքին:

6. Համայնքում քամիների միջին արագությունը 10 մ/վ, անդորրը՝ 20 օր ամռանը, 45 օր ձմռանը:

7. Համայնքի սեփականություն հանդիսացող և համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 3 կմ համայնքային նշանակության:

8.Համայնքի տարածքում գտնվում/գործում են/ միջն.դպրոց, բուժ.կետ կազմակերպությունները:

9.Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից:

10. Համայնքի տարածքում խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 371 գլուխ, մանր եղջ.կենդանիներ.՝ 400 գլուխ, ձիեր՝ 13, թռչուն՝ 1021 հատ:

### 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

11.Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) Հանայնքապետարանի վարչական շենքը,
2) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող կազմակերպությունորը, ջրամբարները.
3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 1ենթակայանները և դրանց կապող 110 կՎ լարման օդային գծերը.
4) Համայնքը սնուցող ջրամատակարարման համակարգերը.
5) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.
6) «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունքը.
7) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները.
8) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները.

12.Նկատի ունենալով, որ հակառակորդի կողմից միջուկային, կենսաբանական, քիմիական զենքերի կիրառումը քիչ հավանական է, նաև քիչ հավանական է ՀԱԷԿ-ի նկատմամբ հարվածներ հասցնելը, ուստի համայնքում ճառագայթային իրավիճակի առաջացումը քիչ հավանական է:

### 2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2018 թվականի N 14-Ա

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և 41-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության  ԿոտայքիմարզիԳեղարդհամայնք
ՀՀ, Կոտայքիմարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2018 թվականի N 15 -Ա

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների  շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-իթիվ 1910-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գերեզմանատեղերի տրամադրման, գերեզմանների հաշվառման և թաղումների գրանցման, գերեզմանատների պահպանման և շահագործման կազմակերպման պատասխանատվությունը դնել՝

1) Գեղարդ համայնքի ղեկավարի տեղակալ Ալիկ Կարապետյանի վրա:

2) Մահացած անձանց գրանցման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Անուշ Նազարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության ԿոտայքիմարզիԳեղարդհամայնք
ՀՀ, Կոտայքիմարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

18 հունիսի 2018 թվականի N 16 -Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրավիրել 2018թվականի հունիսի 25-ին ժամը 11:00-ին՝ ավագանու հերթական 8-րդ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմում ընդգրկվող ավագանու անդամների առաջադրման մասին:
2.Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմերի հաստատման մասին:
3.Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
4.Քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:
5.Համայնքի կամավոր խնդիրների իրականացման կարգը 2018 թվականի համար սահմանելու մասին:
6.Համայնքի աղբահանության սխեման և ժամանակացույցը հաստատելու մասին:
7.Գեղարդ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ